

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Արբիտրաժային համաձայնության առկայության պայմաններում վեճը դատարանի կողմից քննելու հնարավորությունները: Արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթները

Դաս 4

Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+դասի տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար անհրաժեշտ է **240 րոպե / 4 ժամ:**

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում):



Մինչև 5 րոպե

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը կարևոր նշանակություն ունի անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության և դատարանների ծանրաբեռնվածության նվազեցման երաշխավորման համար:

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակներից արբիտրաժի նպատակն է առանց ձգձգումների և նվազագույն ծախսերով, ոչ ավանդական՝ արտադատական եղանակով հասնել արդարության¹ :

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք ինքնաստուգիչ հարցերին:



Մինչև 180 րոպե

¹ *Shahal F. Ali, Consumer Financial Dispute Resolution in a Comparative Content. Cambridge University Press 2013. Pages 190-192:*

Որպես արբիտրաժի առանձնահատկություն հարկ է նշել, որ վեճի հանձնումն արբիտրաժին կատարվում է կողմերի ազատ կամքի հիման վրա արբիտրաժային համաձայնություն կնքելով, այսինքն՝ արբիտրաժային տրիբունալը կարող է քննել վեճ, եթե առկա է կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնություն:

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **արբիտրաժային համաձայնությունը** պայմանագրային կամ ոչ պայմանագրային որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու վերաբերյալ: Արբիտրաժային համաձայնությունը կարող է կնքվել ինչպես պայմանագրում արբիտրաժային վերապահման, այնպես էլ առանձին պայմանագրի (արբիտրաժային համաձայնագրի) ձևով:

Դիցուք, արբիտրաժային համաձայնության առկայությունը ենթադրում է կողմերի ցանկությունը՝ վեճը լուծելու արտադատական կարգով, սակայն հարց է ծագում, թե արդյոք դա բացառում է դատարանի կողմից տվյալ վեճը քննելու հնարավորությունը:

Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն, պարտավոր է կողմերից մեկի միջնորդության հիման վրա, որը բերվել է ոչ ուշ, քան վեճի ելության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը, հայցը թողնել առանց քննության, եթե այդպիսի համաձայնության հիման վրա արբիտրաժային դատարան դիմելու

հնարավորությունը չի վերացել, բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնության առկայությունն օրենքով սահմանված դեպքերում չի սահմանափակում կողմի՝ դատարան դիմելու իրավունքը:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 180-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը թողնում է առանց քննության, եթե պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա արբիտրաժային համաձայնությանը, և այդպիսի համաձայնության հիման վրա արբիտրաժ դիմելու հնարավորությունը չի վերացել, բացառությամբ այն դեպքի, երբ արբիտրաժային համաձայնության առկայությունն օրենքով սահմանված դեպքերում չի սահմանափակում կողմի՝ դատարան դիմելու իրավունքը:

Վերոգրյալից բխում է, որ արբիտրաժային համաձայնության առկայությունը ինքնին չի սահմանափակում դատարանի կողմից տվյալ վեճը քննելու հնարավորությունը և չի հանդիսանում Օրենսգրքի 3-րդ հոդվածով նախատեսված վեճի կարգավորման արտադատական կարգ:

Ավելին, արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում դատարանը կարող է հայցը առանց քննության թողնել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. երբ պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի

ավարտը հղում է կատարում արբիտրաժային համաձայնությանը և

2. այդպիսի համաձայնության հիման վրա արբիտրաժ դիմելու հնարավորությունը չի վերացել:

Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքով, ՀՀ ընտանեկան օրենսգրքով և ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դրույթներով նշված կանոնից բացառություն է սահմանվել: Մասնավորապես, արբիտրաժային համաձայնությունը չի սահմանափակում ամուսնու գույքը բաժանելու հետ կապված վեճը, աշխատողի՝ աշխատանքային պայմանագրից բխող վեճը, ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ սպառողի՝ պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը դատարան հանձնելու իրավունքը՝ բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը:

Օրենսգիրքը ոչ միայն հնարավորություն է ընձեռում արբիտրաժային համաձայնության առկայության պայմաններում հայցով դատարան դիմելու, այլև արբիտրաժի արդյունքում կայացված վճիռը դատարանում վիճարկելու:

Այսպես, Օրենսգրքի 5-րդ ենթաբաժինը, ի թիվս այլնի, կարգավորում է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու և արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթները:

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 5-րդ

հողվածը, որպես կանոն, արգելում է որևէ դատական միջամտություն նույն օրենքով կարգավորվող հարցերին: Մինչդեռ միևնույն ժամանակ որոշ դեպքերի համար օրենսդիրը նախատեսել է բացառություններ՝ ընդհանուր իրավասության դատարաններին իրավունք վերապահելով, ինչպես Օրենքում է օգտագործվում ձևակերպումը, կատարելու միջամտություն, որն արտահայտվում է հետևյալի վերաբերյալ դիմումները քննելով՝

1. արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու,
2. արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու,
3. օտարերկրյա արբիտրաժային վճիռները ճանաչելու ու կատարելու,
4. արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու:

Որպես կանոն, այս դիմումներով վարույթներն իրականացվում են Օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են տվյալ վարույթը կարգավորող դրույթներով և Օրենքով:

Արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումով գործի վարույթը:

Նշված վարույթը կարգավորող նորմերի համաձայն՝ օրենսդիրը Հայաստանի Հանրապետության տարածքում կայացված արբիտրաժի վճիռը՝ բացառապես Օրենքով սահմանված հիմքերով ներկայացնելու պայմանով, չեղյալ ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք է վերապահել՝

1. արբիտրաժային վարույթի մասնակիցներին,
2. այն անձանց, որոնց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ արբիտրաժը

կայացրել է վճիռ:

Ընդ որում, նշված անձինք պարտավոր են այդ դիմումը ներկայացնել Օրենսգրքի 316-րդ և 317-րդ հոդվածներում նշված պահանջների պահպանմամբ:

Նման դիմումների ներկայացման համար Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է որոշակի ժամկետ, որի համաձայն՝ չեղյալ ճանաչման մասին դիմումը որպես կանոն կարող է ներկայացվել արբիտրաժային տրիբունալի վճիռը ստանալուց երեք ամսվա ընթացքում (ընդհանուր կանոնից բացառություն է նախատեսված այն իրավիճակների համար, երբ տեղի է ունեցել այդ վճռի ուղղում, պարզաբանում կամ կայացվել է լրացուցիչ վճիռ):

Հակառակ պարագայում այդ դիմումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած անձին՝ հայցադիմումը վերադարձնելու մասին Օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված կարգով:

Օրենսգրքում տրված կարգավորման համաձայն՝ նշված դիմումը դատարանը պետք է քննի և դրա վերաբերյալ որոշում կայացնի այն վարույթ ընդունելու օրվանից մեկ ամսվա ընթացքում: Ընդ որում՝ Օրենսգրքում իմպերատիվ դրույթ է նախատեսված այն մասին, որ գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը դատավորը պետք է նախապես նշի դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ:

Որպես կանոն գործի քննությունն իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու: Մինչդեռ օրենսդիրը դատարանին իրավունք է վերապահել

հրավիրելու դատական նիստ, եթե անհրաժեշտ համարի պարզաբանումներ ստանալ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ: Այս դեպքում արդեն դիմումի քննության համար սահմանված է մինչև երկամսյա ժամկետ:

Չարկ է նշել, որ գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը պետք է պարտադիր նշվեն դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ, մինչդեռ հնարավոր է իրավիճակ, երբ դատարանը դիմումը վարույթ ընդունելուց հետո միայն հայտնաբերի գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությունը: Ստացվում է, որ դատարանը տվյալ դեպքում պետք է փոփոխի իր կողմից որոշված դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը: Այս առումով առկա է որոշակի օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն:

Չատկանշական է, որ Օրենսգիրքը այս վարույթով դատարանին օժտել է որոշակի ակտիվությամբ՝ իրավունք վերապահելով արբիտրաժից պահանջել այն գործով նյութերը, որով կայացված վճիռը վիճարկվում է դատարանում:

Ավելին, արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերի պարզման առումով ևս դատարանն ունի ակտիվ դեր: Այսպես, արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերը ամրագրված են Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասում, դրանք են.

1. դիմում ներկայացնող կողմն ապացույցներ է

Ներկայացնում այն մասին, որ՝

- ա. արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, անվավեր է,
- բ. դիմող կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից,
- գ. վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային տրիբունալի վճռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր,
- դ. արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, եթե այդ համաձայնությունը չի հակասում սույն օրենքի պարտադիր դրույթներին, կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել սույն օրենքին,

կամ

2. դատարանը պարզում է, որ՝

- ա. համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման

արբիտրաժի կողմից, կամ
բ. վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության
հանրային կարգին:

Միաժամանակ, Օրենսգրքի 318-րդ հոդվածի 5-րդ
մասում տրված կարգավորման համաձայն՝ օրենդիրը
դատարանին օժտել է թվարկված հիմքերի առկայությունը
կամ բացակայությունն **իր նախաձեռնությամբ**
պարզելու լիազորությամբ: Ստացվում է, որ դատարանը
կարող է դուրս գալ արբիտրաժի վճիռը չեղյալ
ճանաչելու դիմումում ներկայացված հիմքերի
շրջանակներից, և արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչել
Օրենքում նշված այլ ցանկացած հիմքով:

Օրենսգրքի 318-րդ հոդվածի 6-րդ մասը
դատարանին իրավունք է վերապահել գործին
մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր
նախաձեռնությամբ ողջամիտ ժամկետով հետաձգելու
որոշման կայացումը, եթե գտնում է, որ արբիտրաժային
վարույթը վերսկսելու միջոցով կարող է
վերացվել արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու
հիմքը: Նման կարգավորումը բխում է նաև Օրենքի
34-րդ հոդվածի 4-րդ մասից, որի համաձայն՝
դատարանը, որին ներկայացվել է վճիռը չեղյալ ճանաչելու
մասին դիմում, կարող է կողմերից մեկի խնդրանքով
կամ իր նախաձեռնությամբ որոշակի ժամանակով
դադարեցնել այդ հարցի քննությունը, որպեսզի
հնարավորություն ընձեռի արբիտրաժային տրիբունալին
վերսկսելու արբիտրաժային վարույթը կամ ձեռնարկելու
այլ միջոցներ, որոնք արբիտրաժային տրիբունալի
կարծիքով կարող են վերացնել արբիտրաժային
տրիբունալի վճռի բեկանման հիմքերը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ոչ բոլոր դեպքերում
կարող է դատարանը վերը նշված

պատճառաբանությամբ հետաձգել որոշման կայացումը, քանի որ կան այնպիսի հիմքեր, որոնք անհնարին է արդեն վերացնել: Այս դրույթը կիրառելի է միայն այն մասով, որով հնարավոր է դա իրականացնել:

Սույն վարույթի շրջանակներում ներկայացված դիմումի քննության արդյունքով դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի Օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները: Այս վարույթով կայացված եզրափակիչ ակտով դատարանը որոշում է կայացնում արբիտրաժի վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ ճանաչելու կամ դիմողի պահանջն ամբողջությամբ մերժելու վերաբերյալ:

Դատարանի որոշումը հրապարակվում է վճռի հրապարակման համար օրենսգրքով սահմանված կարգով և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Այս որոշումը Օրենսգրքի 5-րդ հոդվածի հիմքով հանդիսանում է եզրափակիչ դատական ակտ, սակայն այն բողոքարկելու հնարավորություն օրենսդիրը չի նախատեսել, չնայած, որոշ տեսաբանների կարծիքով արբիտրաժային վճռի վիճարկման վարույթը, որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև, պետք է ենթադրի դատական կարգով իրավունքի պաշտպանության լիարժեք երաշխիքների առկայություն, այդ թվում, արդար դատաքննության իրավունքի այն տարրերի իրացման ապահովում, որոնք կիրառելի են տարբերակված քաղաքացիադատավարական այս ձևի նկատմամբ: Ուստի, օրենսդրորեն պետք է ապահովել նաև իրավունքի խախտմամբ կայացված դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը, քանզի

դատական ակտի բողոքարկումը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի ապահովման հիմնական իրավական կառուցակարգը² :

Չարկ է ընդգծել այն հանգամանքը, որ արբիտրաժի վճռի չեղյալ ճանաչելը խոչընդոտ չէ կրկին արբիտրաժ դիմելու համար, եթե արբիտրաժ դիմելու հնարավորությունն սպառված չէ:

Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումով գործի վարույթը:

Արբիտրաժային վճռի առկայության պարագայում, արբիտրաժի կողմը, որի օգտին կայացվել է արբիտրաժային վճիռը ձեռք է բերում այդ վճռի հարկադիր կատարում պահանջելու պրոցեսուալ իրավունք: Այսինքն, օրենսդիրը նման դիմում ներկայացնելու իրավասությամբ օժտել է միայն այն անձին, որի օգտին կայացվել է արբիտրաժի վճիռը:

Օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Չայաստանի ընդհանուր իրավասության դատարանում նման դիմում քննելու համար պարտադիր պայման է, որ արբիտրաժի վայրը հանդիսանա Չայաստանի Չանրապետության տարածքը:

Այս վարույթով ևս Օրենսգրքի 321-րդ և 322-րդ հոդվածներով որոշակի պարտադիր պահանջներ են նախատեսվել այդ դիմումը ներկայացնելու համար, ու այդ պահանջները չպահպանելը կրկին հիմք է դիմումն այն ներկայացրած անձին վերադարձնելու համար:

² Տե՛ս Չովհաննիսյան Յ., *Արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը և դրանց դասակարգումը*, 2016, http://publications.yasu.am/wp-content/uploads/2016/06/25Hayk_Hovhannisyan.pdf

Օրենսգրքի 321-րդ հոդվածի 4-րդ մասով տրված կարգավորման համաձայն՝ նման դիմումները կարող են ներկայացվել *արբիտրաժի վճիռն ստանալու պահից* մեկ տարվա ընթացքում: Միաժամանակ, հարկ է նշել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կատարողական թերթ ստանալու համար դիմումը ներկայացվում է *արբիտրաժային տրիբունալի վճիռը կայացվելու օրվանից* մեկ տարվա ընթացքում:

Այստեղ գործ ունենք իրավական կոլիզիայի հետ, քանի որ երկու տարբեր նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև առկա է հակասություն:

Այս դիմումները ևս դատարանը պետք է քննի և դրանց վերաբերյալ որոշումը կայացնի դիմումը վարույթ ընդունելու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ որպես կանոն առանց դատական նիստ հրավիրելու, իսկ եթե դատարանն անհրաժեշտ համարի պարզաբանումներ ստանալ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ, ապա կարող է հրավիրել դատական նիստ, որի դեպքում արդեն դիմումի քննության ժամկետը սահմանվել է մինչև երկու ամիս: Ընդ որում, արբիտրաժի վճռի հարկադիր կատարումը կարող է մերժվել բացառապես Օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Այստեղ կրկին առկա է օրենսդրի նույն մոտեցումը, որով պարտադիր կանոն է սահմանում գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակի և վայրի մասին նշել դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ:

Տվյալ դիմումի քննության ընթացքում ևս դատարանը կարող է արբիտրաժից պահանջել այն գործով կյուրերը, որի կապակցությամբ կատարողական թերթ է հայցվում:

Տվյալ վարույթով գործի դատաքննության ժամանակ դատարանը պարզում է Օրենքով նախատեսված՝ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը:

Հարկ է նշել, որ եթե արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը քննելիս պարզվում է, որ դատարանի վարույթում առկա է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում, ապա դատարանը կասեցնում է վճիռը հարկադիր կատարելու համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումի քննությունը:

Դիմումի քննության արդյունքով դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի Օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Դատարանի այդ որոշումը նույնպես հրապարակվում է վճռի հրապարակման համար Օրենսգրքով սահմանված կարգով և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Այս որոշումը ևս եզրափակիչ դատական ակտ է, սակայն կրկին այս դատական ակտի բողոքարկման հնարավորություն օրենսդիրը չի նախատեսել:

Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալուց հետո արգելվում է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ

դիմում ներկայացնելը, բացառությամբ այն դեպքի, երբ վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացրած անձը հիմնավորում է արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումով վարույթի ընթացքում նման դիմում ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

1. [Յովհաննիսյան Վ.Վ., Առևտրային արբիտրաժի Յայաստանի Հանրապետությունում, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2011:](#)
2. **Յովհաննիսյան Յ.**, Արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը և դրանց դասակարգումը, 2016, http://publications.yso.am/wp-content/uploads/2016/06/25Hayk_Hovhannisyan.pdf:
3. [Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի 1958թ. կոնվենցիա:](#)
4. Նյու Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանություններ, ձեռնարկ դատավորների համար, Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ: https://www.arbitration-icca.org/media/12/97501709454762/ny_guide_armenian_final.pdf:



Լրացուցիչ մեդիա-նյութերը նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար: